



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության  
հակակոռուպցիոն դատարանի որոշում  
Նախագահող դատավոր՝ Տ.Դավթյան

Հայաստանի Հանրապետության  
վերաքննիչ քրեական դատարանի որոշում  
Նախագահող դատավոր՝ Մ.Մակյան

2024 թվականի մայիսի 23-ին

քաղաք Երևանում

ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝  
մասնակցությամբ դատավորներ՝

Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ  
Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ  
Ս.ՉԻՉՈՅԱՆԻ  
Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2023 թվականի մարտի 9-ի որոշման դեմ թիվ 61201521 քրեական վարույթով մեղադրյալ Էմիլ Գրիգորյանի պաշտպան Ա.Թևանյանի վճռաբեկ բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2021 թվականի մարտի 10-ին ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 315-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 61201521 քրեական գործը և նախաքննության կատարման նպատակով ուղարկվել ՀՀ քննչական կոմիտե:

2022 թվականի մարտի 29-ին Է.Գրիգորյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով և 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

2022 թվականի մայիսի 31-ին Է.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով:

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ Ռ.Թունիյանի (այսուհետ նաև՝ Նախաքննության մարմին) 2023 թվականի հունվարի 25-ի «Գույքի արգելադրման մասին» որոշմամբ 1.092.593.543 ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Արշակունյաց պողոտայի 12 հասցեի 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի վրա:

2. Նախաքննության մարմինը 2023 թվականի հունվարի 26-ին միջնորդություն է ներկայացրել ՀՀ հակակոռուպցիոն դատարան (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) 2023 թվականի հունվարի 25-ի՝ «Գույքի արգելադրման մասին» որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ:

3. Առաջին ատյանի դատարանի 2023 թվականի փետրվարի 10-ի որոշմամբ Նախաքննության մարմնի վերոնշյալ միջնորդությունը բավարարվել է և «Գույքի արգելադրման մասին» 2023 թվականի հունվարի 25-ի որոշման իրավաչափությունը հաստատվել:

4. Առաջին ատյանի դատարանի վերոհիշյալ որոշման դեմ մեղադրյալ Է.Գրիգորյանի պաշտպան Ա.Թևանյանի հատուկ վերանայման բողոքը Վերաքննիչ դատարանի 2023 թվականի մարտի 9-ի որոշմամբ մերժվել է, իսկ Առաջին ատյանի դատարանի 2023 թվականի փետրվարի 10-ի որոշումը՝ թողնվել անփոփոխ:

5. Վերաքննիչ դատարանի վերոհիշյալ որոշման դեմ մեղադրյալ Է.Գրիգորյանի պաշտպան Ա.Թևանյանը բերել է հատուկ վերանայման բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2023 թվականի ապրիլի 6-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

5.1. Դատավարության մասնակիցների կողմից հատուկ վերանայման բողոքի պատասխան չի ներկայացվել:

**Հատուկ վերանայման բողոքի հիմքերը, դրանք հիմնավորող փաստարկները և պահանջը.**

Հատուկ վերանայման բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

6. Բողոքի հեղինակը գտել է, որ Վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, նյութական և քրեադատավարական օրենքի էական խախտումներ, ինչպես նաև առկա են բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող փաստական և իրավական հանգամանքներ:

Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար, քանի որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Բացի այդ, բողոքաբերը գտել է, որ առերևույթ լուրջ դատական սխալ թույլ տալու հետևանքով Վերաքննիչ դատարանի կայացված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը:

6.1. Բողոքաբերը, մասնավորապես, գտել է, որ «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությունը օրենքի պահանջներին հակառակ դարձվել է ոչ միայն պատասխանատու իր բաժնետիրոջ պարտավորությունների համար, այլև անտեսվել և խախտվել են ընկերության 1400 բաժնետերերի իրավունքները միայն այն պատճառաբանությամբ, որ ընկերության բաժնետերերից մեկը՝ Է.Գրիգորյանը, վարույթն իրականացնող մարմնի կողմից կասկածվում է ենթադրյալ հանցագործության կատարման մեջ: Վերաքննիչ դատարանն անտեսել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 60-րդ, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածների կարգավորումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Է.Գրիգորյանի անվամբ գույք առկա չէ, իսկ արգելադրված գույքը հանդիսանում է ԲԲ ընկերության գույքը, որից Է.Գրիգորյանի մասն առանձնացված չէ:

6.2. Բողոքաբերի պնդմամբ՝ մեղադրյալի մահացած լինելու պարագայում չի կարող լինել մեղադրական դատավճիռ, հետևաբար դատարանի որոշմամբ չի կարող բռնագրավվել մահացածի գույքը, առավել ևս հանցագործությամբ պատճառված վնասի համար ծագած պարտավորությունները չեն կարող մտնել ժառանգության ծավալի մեջ, և այդ պայմաններում մահացածի գույքի վրա կալանք դնելը իրավաչափ համարվել չի կարող:

6.3. Վերոգրյալից բացի, բողոքաբերը նշել է, որ քրեական վարույթով մի քանի անձանց մեղադրանք առաջադրված լինելու պայմաններում, Նախաքննության

մարմնի կողմից արգելադրվել է միայն «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Արշակունյաց պողոտայի 12 հասցեի 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը, մինչդեռ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է եղել գույքն արգելադրելիս հաշվի առնել ենթադրյալ հանցագործությանը մեղադրյալներից յուրաքանչյուրի դերը և մասնակցության աստիճանը:

7. Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է ամբողջությամբ քեկանել Վերաքննիչ դատարանի 2023 թվականի մարտի 9-ի որոշումը՝ կայացնելով դրան փոխարինող դատական ակտ՝ մերժելով Նախաքննության մարմնի միջնորդությունը:

**Հատուկ վերանայման բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

8. Նախաքննության մարմնի 2023 թվականի հունվարի 25-ի՝ «Գույքի արգելադրման մասին» որոշման համաձայն՝ «(...) ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 61201521 քրեական գործն այն բանի համար, որ «Երևան ոսկերչական գործարան» ԲԲ ընկերության պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից ծառայության նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմանը հետևանքով պետական բաժնեմասով ընկերությունը ոչ միայն զրկվել է 1.092.593.543 ՀՀ դրամ պարտքը «Երևան ոսկերչական գործարան» «Գնումն» ԲԲ ընկերությունից ստանալու հնարավորությունից, այլև՝ ծանրաբեռնվել է նաև շուրջ 56.000.000 ՀՀ դրամ պետական փորք վճարելու պարտավորությամբ:

Կատարված նախաքննության ընթացքում պարզվել է, որ ՀՀ կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 907 որոշմամբ «Երևան ոսկերչական գործարան» ՓԲ ընկերությունն առանձնացված ձևով վերակազմակերպվել է՝ «Երևան ոսկերչական գործարան» ԲԲ ընկերության և «Երևան ոսկերչական գործարան-1» ԲԲ ընկերության:

«Երևան ոսկերչական գործարան-1» ԲԲ ընկերության մասնավորեցումը իրականացվել է նոր բաժնետիրոջ թողարկման միջոցով, որոնք փեղաբաշխվել են «Գնումն» և «Ջանի Լազարո» ԲԲ ընկերությունների միջև:

(...)

Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության նկատմամբ «Գնումնի» դեբիտորական պարտքը 2010 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 2.465.984.000 ՀՀ դրամ, որը գոյացել է Ընկերությունների միջև երկարամյա առևտրատնտեսական համագործակցության արդյունքում, ինչն

էլ Ընկերությունները յուրաքանչյուր տարի արձանագրում էին միմյանց միջև ստորագրվող «Փոխադարձ հաշվարկների ստուգման» ակտ-համաձայնագրերով:

(...)

2015 թվականի դեկտեմբերի 16-ին կայացած տնօրենների խորհրդի նիստում հանձնարարվել է Ընկերությունում անցկացնել ուսումնասիրություն, որի արդյունքում արձանագրվել է, որ «Գնումն» ընկերության դեպիտորական պարտքն Ընկերությանը 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 1.522.691.840 ՀՀ դրամ:

«Գնումն» ընկերության կողմից վերը նշված պարտավորությունը ոչ միայն ընդունվել է, այլ նաև մշտապես արտացոլված է եղել հաշվապահական հաշվեկշռում և ժամանակի ընթացքում որպես «պարտքի մարում» մասնակիորեն մարվել է և վերջնական պարտքը կազմել է 1.092.593.543 ՀՀ դրամ:

(...)

Նախաքննության ընթացքում Էմիլ Գուրգենի Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով և 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

(...)

2022 թվականի մայիսի 31-ին որոշում է կայացվել Էմիլ Գրիգորյանին առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին և նրան մեղադրանք է առաջադրվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-309-րդ հոդվածի 3-րդ մասով այն հանրորեն վրանգավոր արարքի կատարման համար, որ նա, 2001 թվականից զբաղեցնելով «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերության տնօրենի պաշտոնը, միաժամանակ հանդիսանալով «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ ընկերության բաժնետեր, խորհրդի անդամ, ունենալով հեղինակություն և ազդեցություն «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ ընկերության աշխատակիցների նկատմամբ, «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերության և «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ ընկերության միջև կնքված պայմանագրի արդյունքում «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ ընկերության նկատմամբ ձևավորված 1.092.593.543 ՀՀ դրամ դեբիտորական պարտքը չվճարելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ ընկերության նախկին տնօրեն Գագիկ Վլադիմիրի Կաֆյանի հետ, վերջինի կողմից «Բաց բաժնետիրական ընկերությունների» մասին ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջների խախտմամբ՝ 2012-2016 թվականներն ընկած ժամանակահատվածում, «Երևանի ոսկերչական գործարան» ԲԲ ընկերության մասնակցող բաժնետերերի կողմից անցկացվող խորհրդի նիստի դրական կարծիքի բացակայության և միանձնյա խոշոր գործարք կնքելու իրավասություն չունենալու պայմաններում, դրդել է Գագիկ Կաֆյանին՝ փոխադարձ հաշվարկների

սարուզման սկզբ-համաձայնագրեր կնքելու եղանակով «Բաց բաժնետիրական ընկերությունների» մասին ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով նախատեսված իր լիազորություններն սկսեցին անցնելուն, ինչի հետևանքով անհիմն երկարաձգվել է «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերության ունեցած 1.092.593.543 ՀՀ դրամի պարտավորությունների վճարման ժամկետները, իսկ այնուհետև՝ ՀՀ օրենսդրությամբ այն հետ վերադարձնելուն ուղղված գործընթացը, վերջինի գիրակցության և կամքի վրա ներազդեցության միջոցով նրա մոտ առաջացրել է հանցանք կատարելու դիրավորություն և վճռականություն:

(...)

ՀՀ կադաստրի կոմիտեից ստացվել և քրեական վարույթին կցվել է «Երևան ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությանը պարկանող անշարժ գույքի միավորի վերաբերյալ պահանջվող տեղեկությունը, համաձայն որի՝ Ընկերությանը պարկանող Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12 հասցեի 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 1.289.940.063 ՀՀ դրամ:

Այսպիսով՝ քրեական վարույթի նախաքննության ընթացքում «Երևան ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությունը չի վերականգնել առերևույթ հանցագործությամբ «Երևան ոսկերչական գործարան» ԲԲ ընկերությանը պարճատված վնասը, որը կազմում է 1.092.593.543 ՀՀ դրամ և նման պայմաններում առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ մինչև դատարանի կողմից վերջնական դատական սկզբի կայացումը վերջինի կողմից փնտրվող գույքը կարող է օտարվել և նման պայմաններում ենթադրյալ հանցագործությամբ պարճատված հնարավոր վնասի, վարությանին հնարավոր ծախսերի հարուցումն ապահովելու համար անհրաժեշտ է արգելանք դնել «Երևան ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերության պարկանող Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12 հասցեի 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի վրա:

Հարկանշական է այն հանգամանքը, որ սույն քրեական վարույթով նախաքննության ընթացքում պարզվել է նաև, որ վարույթով մեղադրյալ ներգրավված Էմիլ Գրիգորյանը մահացել է, ինչի արդյունքում «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերության ներկայիս բաժնետերուները, հետևաբար նաև նշված ԲԲ ընկերությանը սեփականության իրավունքով պարկանող անշարժ գույքը կարող է օտարվել այլ անձի, ինչի արդյունքում սույն քրեական վարույթով քննության առարկա հանդիսացող առերևույթ հանցագործությամբ պարճատված առանձնապես խոշոր չափերի վնասը այլ կերպ վերականգնելը կարող է հետագայում անհնարին դառնալ:

Ինչ վերաբերում է արգելադրման ենթակա Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12-րդ հասցեի 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին, ապա դա օբյեկտ, սպառելու վարույթն իրականացնող մարմնի կասկածը հիմնավորվում է այն փաստով, որ քննարկվող առերևույթ հանցագործությամբ պարճատված ընդհանուր 1.092.593.543 ՀՀ դրամը «Երևան ոսկերչական գործարան» ԲԲ ընկերությանը վերադարձնելու նպատակով կայացած քաղաքացիական գործերով «Երևան ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությունը հրաժարվել է այդ գումարը վերադարձնելուց, իսկ սույն քրեական վարույթով մեղադրյալ Էմիլ Գրիգորյանը առերևույթ հանցագործությամբ պարճատված վնասը հատուցելու համար անհրաժեշտ և բավարարող արժեքով այլ անշարժ կամ շարժական գույք որպես ֆիզիկական անձ չունի: Հետևաբար վարույթն իրականացնող մարմինն իրավաչափ է համարում վերոնշյալ անշարժ գույքի վրա արգելանքի կիրառումը՝ մինչև դատարանի կողմից վերջնական դատական ակտի կայացումը ենթադրյալ հանցագործությամբ պարճատված հնարավոր վնասի, վարույթային հնարավոր ծախսերի հատուցումն ապահովելու համար (...):<sup>1</sup>:

9. Առաջին ատյանի դատարանի 2022 թվականի հոկտեմբերի 27-ի որոշման համաձայն՝ «(...) Դատարանն արձանագրում է, որ գույքն արգելադրելու մասին քննիչի՝ 2023 թվականի հունվարի 25-ի որոշմամբ 1.092.593.543 ՀՀ դրամի չափով արգելանք է դրվել «Երևան ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12-րդ հասցեի 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի վրա:

Դատարանը փաստում է, որ ըստ վարույթի շրջանակում ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալից սրացված թիվ ԱՊ/5649-2022 գրության՝ Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12-րդ հասցեի 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 1.289.940.063 ՀՀ դրամ:

Վերոգրյալից սրացվում է, որ հիշյալ ընկերությունն ունի նման գույք, որի արժեքն ավելի բարձր է, իսկ քննիչն իր որոշմամբ արգելանք է դրել ենթադրյալ հանցագործությամբ պարճատված հնարավոր վնասի չափով, այն է՝ 1.092.593.543 ՀՀ դրամ:

2023 թվականի հունվարի 25-ի՝ գույքն արգելադրելու վերաբերյալ որոշման ուսումնասիրության արդյունքում Դատարանն արձանագրում է, որ դրանում, որպես գույքի արգելադրման նպատակ է նշվել ենթադրյալ հանցագործությամբ պարճատված հնարավոր վնասի և վարույթային հնարավոր ծախսերի

<sup>1</sup> Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 121-127:

հասրուցման սպահովումը, իսկ որպես հիմք՝ այն, որ առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օտարվել:

Նկարի ունենալով, որ առկա է ենթադրյալ հանցագործությամբ պարճառված հնարավոր վնաս, այն է՝ 1.092.593.543 ՀՀ դրամ, ինչպես նաև Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12-րդ հասցեի 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 1.289.940.063 ՀՀ դրամ, հաշվի առնելով մեղսագրվող արարքների բնույթը, կարարման ենթադրյալ եղանակները, պարճառված վնասի չափերը, վերոգրյալ իրավանորմերի, ինչպես նաև վկայակոչված նախատեպային որոշումների լույսի ներքո արձանագրում է, որ գույքի արգելադրման նպատակներից ենթադրյալ հանցագործությամբ պարճառված հնարավոր վնասի հասրուցումն սպահովելը, ինչպես նաև հիմքը՝ գույքն օտարելը, առկա է: Միննույն ժամանակ, հարկ է նկատել, որ հնարավոր դատական ծախսերի վերաբերյալ տեղեկություններ Գաբարյանին չեն ներկայացվել, ուստի նշված նպատակը փոխադրում բացակայում է:

Վերոգրյալի համարեքստում Գաբարյանն արձանագրում է, որ 2023 թվականի հունվարի 25-ի՝ գույքն արգելադրելու վերաբերյալ որոշումն իրավաչափ է և կայացվել է Օրենսգրքի 131-133-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ, ուստի քննիչի միջնորդությունը հիմնավոր է և ենթակա է քավարարման:

Ինչ վերաբերում է պաշտպանի կողմից բարձրացված հարցերին առ այն, որ գործով երկու մեղադրյալների դեպքում էական նշանակություն ունի հավասար մասերով արգելանք դնելը վերջիններին պարկանող գույքերի վրա, սակայն քննիչը արգելանք է դրել միայն իր պաշտպանյալին պարկանող գույքի վրա, ինչպես նաև ընկերությունը պարասիսանարու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար, սպա Գաբարյանը գրնում է, որ այդ հարցերը հնարավոր է ողջամիտ են, սակայն դրանց մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում լիարժեք ու հաստատական պարասիսաններ փայ հնարավոր չէ: Այն կարող է պարզաճ ու լիարժեք գնահատման ենթարկվել վարույթի հետագա փուլերում, իսկ ներկայում Գաբարյանը կարող է սրուգել բացառապես քննիչի կայացրած որոշման իրավաչափությունը: Սույն ընթացակարգի շրջանակներում Գաբարյանն արդեն իսկ արձանագրել է, որ քննիչի կայացրած որոշումը համապարասիսանում է Օրենսգրքի դրույթներին, իսկ ներկայացված նյութերը, առերևույթ, վկայում են այդ որոշման կայացման անհրաժեշտության մասին (...):<sup>2</sup>:

10. Վերաքննիչ դատարանը՝ Առաջին ատյանի դատարանի որոշումն անփոփոխ թողնելու մասին 2023 թվականի մարտի 9-ի որոշմամբ արձանագրել է

<sup>2</sup> Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 35-48:



հետևյալը. «(...) Վերաքննիչ դատարանը փաստում է, որ ինչպես իրավաօրինակ արձանագրել է Առաջին արյանի դատարանը, միջնորդությանը կից ներկայացված նյութերի ուսումնասիրությունը բացառապես վկայում է այն մասին, որ սույն դեպքով առկա է ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնաս, այն է՝ 1.092.593.543 ՀՀ դրամ և այս համարեքստում Վերաքննիչ դատարանն իր համաձայնությունն է հայտնում Առաջին արյանի դատարանի այն հետևությունը, որ գույքի արգելադրման նպատակներից ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի հարուցումն ապահովելը, ինչպես նաև հիմքը՝ գույքի հնարավոր օտարումը կանխելը, առկա է: Միաժամանակ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ քննիչի կողմից ինչպես միջնորդությամբ, այնպես էլ դրան կից նյութերով չեն ներկայացվել փաստական փյուռներ հնարավոր դատական ծախսերի վերաբերյալ, ուստի առաջին արյանի դատարանն այս առումով հանգել է ճիշտ հետևության առ այն, որ նշված նպատակը փյուռ դեպքում բացակայում է:

Հարկանշական է, որ 21.12.2022թ.-ին և 05.01.2023թ.-ին քննիչի կողմից նույն գործով ներկայացված՝ գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ միջնորդությունների քննարկման ժամանակ պաշտպանն առարկել է դրանց դեմ, նշելով, որ միայն Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12 հասցեի՝ 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի արժեքը գերազանցում է ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը, և վարույթն իրականացնող մարմինը այդ գույքի նկարմամբ արգելանք կիրառելով, կարող է ապահովել ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասի հարուցումը, ուստի, առարկել է այլ գույքերի նկարմամբ արգելադրում կիրառելու վերաբերյալ: Այսինքն, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ նախորդ 2 միջնորդությունների քննարկման արդյունքում պաշտպանն իր համաձայնությունն է հայտնել, որպեսզի արգելադրվի բացառապես Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12 հասցեի՝ 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույք, ինչպես և փեղի է ունեցել սույն դեպքում, մինչդեռ, ներկայումս վերջինս իր անհամաձայնությունն է հայտնում հենց այդ նույն գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է պաշտպանի մարնանշած այն հանգամանքին, որ մեղադրյալ Էմիլ Գրիգորյանը մահացել է, ապա դատարան արձանագրում է, որ քննիչի կողմից ներկայացրած՝ գույքի արգելադրման իրավաչափությունը հաստատելու մասին 3 միջնորդությունների քննության ժամանակահատվածում վերջինիս արդեն իսկ մահացած է եղել և պաշտպանը նախաքննական մարմին իր պաշտպանյալի մասով քրեական գործի վարույթը կարճելու միջնորդությամբ չի դիմել /եթե անգամ՝ նման միջնորդություն առկա է, ապա դատարանն այդ մասին փեղեկություն չունի՝ ո՛չ քննիչի և ո՛չ էլ պաշտպանի կողմից այդ մասով

համապատասխան փաստաթղթեր Վերաքննիչ դատարան չեն ներկայացվել/։ Ավելին, սույն բողոքը չի վերաբերում վարույթն իրականացնող նախաքննական մարմնի կողմից վարույթը բացառող հանգամանքները քննության չառնելուն կամ քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ պաշտպանի միջնորդությունը մերժելուն, հետևաբար, Վերաքննիչ դատարանը որպես ելակետային փաստական փոխաներ ունի հարուցված քրեական գործ, նշված գործով ներգրավված մեղադրյալներ, ենթադրյալ հանցագործությամբ պարճառված հնարավոր վնաս և այդ հնարավոր վնասի հարուցման համար գրավադրվող գույք։

Անդրադառնալով ներկայացված հայտնի վերանայման բողոքի փաստարկներին առ այն, որ վարույթն իրականացնող մարմինը ընդհանրապես ուշադրություն չի դարձրել, իսկ դատարանն էլ անտեսել է այն հանգամանքը, որ մեղադրյալը մահացել է 6 ամիս առաջ, որից հետո այդ հիմքով քրեական գործի կարճման հարցը չի էլ քննարկվել ու կա Էմիլ Գրիգորյանի գույքի ժառանգ, ով ոչ մի կերպ պատասխանատու չի կարող համարվել Էմիլ Գրիգորյանի կողմից ենթադրյալ հանցագործությամբ պարճառված վնասի համար, ապա, դատարանը ևս մեկ անգամ ցանկանում է ընդգծել, որ սույն հայտնի վերանայման բողոքի շրջանակներում քննարկվում է քննիչի կողմից ներկայացված՝ գույքի արգելադրումը հաստատելու մասին որոշման իրավաչափության հարցը, այլ ոչ թե՝ քրեական գործը կարճելու կամ հակառակը։ Նույնը նաև առգրավված ոսկյա զարդերը որպես իրենդեն ապացույց ճանաչելու մասով։ Վերաքննիչ դատարանը փաստում է, որ դրանք որպես իրենդեն ապացույց ճանաչելու իրավաչափության հարցը դուրս է սույն բողոքի սահմաններից և այն կարող է վիճարկվել վարույթային այլ գործիքակազմով։

Ինչպես նշվեց վերևում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«5. Եթե մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը մեղադրյալը մահացել է, ապա նրա ժառանգները պատասխանատու չեն վարույթային ծախսերի հետ կապված նրա պարտավորությունների համար»։

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի հիշյալ հիմքով մահացած մեղադրյալի ժառանգները պատասխանատու չեն միայն վարույթային ծախսերի հետ կապված նրա պարտավորությունների համար, իսկ ենթադրյալ հանցագործությամբ պարճառված գույքային վնասի վերաբերյալ օրենքը որևէ բացառություն չի սահմանում։

Վերաքննիչ դատարանը փաստում է, որ գույքի արգելադրման իրավաչափության դատական սրուգման շրջանակներում այս կամ այն պարճատեսակի կամ քրեաիրավական ներգործության միջոցի կիրառման հնարավորության գնահատումն ունի բացառապես կանխարեսական բնույթ և

դատարանը փոխյալ փուլում պետք է զերծ մնա նշված հարկադրանքի միջոցների կիրառման և/կամ չկիրառման հնարավորության վերաբերյալ կարեգորիկ դատողությունների կատարումից: Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության փուլային տարանջարումն ինքնանպատակ չէ և չի կրում մեխանիկական բնույթ, այդ փուլերից յուրաքանչյուրն օժտված է ինքնատիպ խնդիրներով և դրանց հասնելու համար օգտագործում է քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված կոնկրետ մեխանիզմներ, որոնք ևս այդ փուլերից յուրաքանչյուրի համար առանձնահատուկ են, հետևաբար՝ դատարանի դերը յուրաքանչյուր փուլում տարբեր է:

Ինչ վերաբերում է հատուկ վերանայման բողոքից բխող մյուս փաստարկներին ու դատողություններին, ապա հարկ է արձանագրել, որ սույն որոշմամբ վերը շարադրված իրավական դիրքորոշումները, վերլուծություններն ու դատողություններն իրենց համակցության մեջ արդեն իսկ ամբողջությամբ ներառում են դրանց վերաբերյալ Վերաքննիչ դատարանի մտրեցումներն ու բարձրացված հարցերի պատասխաններն, ուստի, լրացուցիչ առանձին-առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

(...) Վերոշարադրյալի հիման վրա պետք է փաստել, որ հիմնավորված են ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի փետրվարի 10-ի թիվ ՀԿԴ/0009/15/23 որոշմամբ արտահայտված հետևությունները, Առաջին արյանի դատարանը հանգել է ներկայացված նյութերից բխող հիմնավոր եզրահանգման և թույլ չի տվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտում, որը հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել անհիմն դատական ակտ կայացնելուն, ուստի նման պարագայում հատուկ վերանայման բողոքի հիմնավորումներն ի գործու չեն չեզոքացնելու Առաջին արյանի դատարանի իրավաչափ հետևությունները (...)»<sup>3</sup>:

### **Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

11. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյոք գույքի արգելադրման մասին Նախաքննության մարմնի որոշման իրավաչափությունը հաստատելու մասին ստորադաս դատարանների հետևությունները:

12. ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը»:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր որ ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

<sup>3</sup> Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 29-47:

(...)

3. *Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (...)*»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, քացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

*Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:*

12.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *Borzhonov v. Russia* գործով կայացված վճռում մեկնաբանելով Եվրոպական կոնվենցիայի Արձանագրության 1-ին հոդվածի դրույթները, նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով, մասնավորապես, Եվրոպական կոնվենցիայի Արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովել համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ<sup>4</sup>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի համաձայն՝ «1. Գույքի արգելադրումը կիրառվում է ենթադրյալ հանցագործությանը

<sup>4</sup> Տե՛ս *Borzhonov v. Russia* գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:

պարճառված հնարավոր վնասի կամ վարութային հնարավոր ծախսերի հարուցումը, ինչպես նաև գույքի հնարավոր բնագրավումը կամ բնագանձումն ապահովելու համար:

2. Գույքը կարող է արգելադրվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում.

1) սպացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքն ուղղակի կամ անուղղակի առաջացել կամ սրացվել է հանցագործության արդյունքում կամ այդ գույքի օգրագործումից սրացված եկամուտն է կամ այլ տեսակի օգուտ.

2) սպացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը հանցանքի կատարման համար օգրագործված կամ օգրագործման համար նախատեսված գործիք է կամ միջոց.

3) սպացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված սխարեկշական գործունեությունը ֆինանսավորելուն ուղղված գույք է, այդ գույքի օգրագործումից սրացված եկամուտ կամ այլ տեսակի օգուտ.

4) սպացույցների գերակշռությամբ հիմնավորվում է, որ այդ գույքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 291-րդ, 292-րդ, 340-րդ կամ 399-րդ հոդվածներով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկա է.

5) առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օգրարվել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված գույքի բացակայության դեպքում կարող է արգելադրվել դրան համարժեք գույք»:

Նույն օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերով կարող է արգելադրվել ցանկացած անձի գույքը, իսկ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով արգելադրվել կարող է մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պարասխանաարվություն կրող անձի գույքը, ներառյալ ընդհանուր սեփականության իրավունքով պարկանող գույքը՝ անկախ գույքի տեսակից և այն տիրապետողից: Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում կարող է արգելադրվել միայն համապարասխան բաժինը:

2. Մի քանի մեղադրյալներից կամ նրանց գործողությունների համար գույքային պարասխանաարվություն կրող անձանցից յուրաքանչյուրի՝ արգելադրման ենթակա գույքի բաժինը որոշելիս վարույթն իրականացնող մարմինը հաշվի է առնում ենթադրյալ հանցագործությանը մեղադրյալներից յուրաքանչյուրի դերը և մասնակցության աստիճանը:

### 3. Արգելադրման ենթակա չէ՝

1) այն գույքը, որի վրա օրենքի համաձայն չի կարող բռնագանձում կամ բռնագրավում տարածվել.

2) իրենին ապացույց ճանաչված գույքը»:

Նույն օրենսգրքի 133-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նախաքննության ընթացքում գույքն արգելադրվում է քննիչի որոշման հիման վրա: Այդ որոշումը և այն հիմնավորող նյութերը ետօրյա ժամկետում ներկայացվում են իրավասու դատարանի հաստատմանը: Գատարանի վարույթում գույքն արգելադրվում է դատարանի որոշմամբ:

2. Որոշման մեջ նշվում են արգելադրման ենթակա գույքը, դրա սեփականատերը և տիրապետողը, գույքի գրանցվելու վայրը, ինչպես նաև գույքի այն արժեքը, որը բավարար է արգելադրման նպատակն ապահովելու համար (...)

10. Արձանագրության պատճենն ստորագրությամբ հանձնվում է արգելադրված գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա ընտանիքի չափահաս անդամներից որևէ մեկին կամ տեղական ինքնակառավարման համապատասխան մարմնի ներկայացուցչին: Իրավաբանական անձին պարկանող կամ նրա տիրապետության ներքո գրանցվող գույքն արգելադրելու դեպքում արձանագրության պատճենն ստորագրությամբ հանձնվում է դրա ներկայացուցչին»:

Նույն օրենսգրքի 294-րդ հոդվածի համաձայն՝ «1. Սույն օրենսգրքով սահմանված պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դատարանը քննում է՝

1) գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ միջնորդությունը (...):»:

Նույն օրենսգրքի 297-րդ հոդվածի համաձայն՝ «Գույքի արգելադրման մասին որոշման իրավաչափությունը հաստատելու միջնորդության քննության արդյունքով դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը.

1) միջնորդությունը մերժելու և գույքի արգելադրման մասին քննիչի որոշումը վերացնելու մասին.

2) միջնորդությունը բավարարելու և գույքի արգելադրման մասին քննիչի որոշման իրավաչափությունը հաստատելու մասին (...):»:

12.2. Վճռաբեկ դատարանը, 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների համատեքստում Ալլա Սեկոյանի վերաբերյալ գործով քննարկելով գույքի վրա կալանք դնելու ինստիտուտի առանձնահատկությունները, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) [Կ]անխարգելիչ բնույթ կրող քրեադատավարական

հարկադրանքի այս միջոցը (գույքի արգելադրումը) կոչված է սեփականության (կամ այլ գույքային) իրավունքների սահմանափակման միջոցով ապահովելու քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը, դատական ծախսերը:

[Ի]ր սեփականությունը հանդիսացող գույքն իր հայեցողությամբ փնտրիներ, փրկապետելու և օգրագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը սահմանափակող քրեադատական հարկադրանքի այս միջոցի իրավաչափ կիրառման համար վարույթն իրականացնող մարմինն ընդհանուր շահի և անհարի՛ իր գույքից անարգել օգրվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև պարտավոր է ապահովել արդարացի հավասարակշռություն:

(...) [Օ]րենսդիրը սահմանել է գույքի վրա կալանք դնելու՝ որպես քրեադատական հարկադրանքի միջոցի իրականացման նպատակները, իրավական հիմքերը, ինչպես նաև այն անձանց շրջանակը, ում սեփականությունը հանդիսացող կամ ում փրկապետության տակ գրավող գույքի վրա կարող է կալանք դրվել:

(...) [Գ]ույքի վրա կալանք դնելու հիմքերի առկայության պարզաճ հիմնավորումն առանցքային նշանակություն ունի ինչպես գույքի վրա կալանք դնելու մասին օրինական որոշման կայացման, այնպես էլ հանրային շահի ու անհարի սեփականության իրավունքի պաշտպանության արդարացի հավասարակշռություն ապահովելու տեսանկյունից: Ուստի, գույքի վրա կալանք դնելիս վարույթն իրականացնող մարմինը, ելնելով գույքի վրա կալանք դնելու նպատակից, պետք է պարճառաբանված կերպով հիմնավորի, որ.

1) տվյալ գործով անձը ներգրավված է որպես կասկածյալ կամ մեղադրյալ,  
2) ենթադրաբար կատարված հանցագործությամբ պարճառվել է հատուցման ենթակա վնաս,

3) [Ա]ռկա է հիմնավորված ենթադրություն առ այն, որ գույքը, որի վրա կալանք է դրվում, սրացվել է կասկածյալի կամ մեղադրյալի հանցավոր գործողություն(ներ)ի արդյունքում,

4) գործով ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը, մեղադրյալը կամ այն անձը, ում մոտ գրավում է կամ ում սեփականությունն է հանդիսանում գույքը, կարող են թաքցնել, փչացնել կամ սպառել այն:

(...) Վճռաբեկ դատարանը գրնում է, որ գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու հավանական վրանգը վարույթն իրականացնող մարմինը պետք է հիմնավորի գործով ձեռք բերված փաստական տվյալ(ներ)ով, հակառակ պարագայում անհարկի կասահմանափակվի իր գույքն անարգել փնտրիներ, փրկապետելու և օգրագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը (...)»<sup>5</sup>:

<sup>5</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Ալլա Սեկոյանի գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԳ/0185/11/11 որոշումը:

Վճռաբեկ դատարանը Սամվել Մայրապետյանի գործով արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «(...) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի սեփականության իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակումը բացառող կարևոր դատավարական երաշխիք է օրենսդրական այն պահանջը, որ վարույթն իրականացնող մարմնի որոշումը՝ անձի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ, պետք է լինի օրինական, հիմնավորված և պարճառաբանված: Իսկ դա ենթադրում է, որ գույքի վրա կալանք դնելու մասին որոշումը պետք է կայացվի քրեադատավարական օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ, քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի կիրառման անհրաժեշտությունը, այլ կերպ՝ դրա կիրառման հիմքերի և նպատակների առկայությունը հիմնավորող՝ քրեական գործի նյութերից բխող փաստական փյուռիների հիման վրա: Գույքի վրա կալանք դնելու մասին որոշման մեջ վարույթն իրականացնող մարմինը, հիմնվելով գործում առկա նյութերի վրա, պարտավոր է հիմնավորել դրա իրավական հիմքերի և նպատակներից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը՝ չսահմանափակվելով միայն գույքի վրա կալանք դնելը կարգավորող օրենսդրական ձևակերպումների շարադրանքով: Միայն վերոնշյալ չափանիշների պահպանման դեպքում է հնարավոր ապահովել հասարակության ընդհանուր շահի և անհատի սեփականության (կամ այլ գույքային) իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռությունը: (...)»<sup>6</sup>:

12.3. Սույն որոշմամբ մեջբերված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը, պայմանավորված գույքի արգելադրման հիմքերով, սահմանել է այն անձանց շրջանակը, ում սեփականությունը հանդիսացող կամ ում տիրապետության տակ գտնվող գույքի վրա կարող է արգելանք դրվել: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերով և 3-րդ մասով նախատեսված հիմքերով կարող է արգելադրվել ցանկացած անձի գույքը, իսկ 131-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով, այն է՝ առկա է ողջամիտ ենթադրություն այն մասին, որ այդ գույքը կարող է օտարվել, թաքցվել, վնասվել, ոչնչացվել կամ սպառվել, արգելադրվել կարող է միայն մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի գույքը, ներառյալ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը՝ անկախ գույքի տեսակից և այն տիրապետողից: Ընդհանուր բաժնային սեփականության դեպքում կարող է արգելադրվել միայն համապատասխան բաժինը:

<sup>6</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Սամվել Մայրապետյանի գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԴ/0587/11/18 որոշումը:



13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Նախաքննության մարմինը որոշում է կայացրել «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12 հասցեում գտնվող 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը 1.092.593.543 ՀՀ դրամի չափով ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի, վարույթային հնարավոր ծախսերի հատուցումն ապահովելու նպատակով արգելադրելու մասին՝ այն պատճառաբանությամբ, որ նշված ընկերությունը չի վերականգնել առերևույթ հանցագործությամբ պատճառված վնասը, իսկ սույն քրեական վարույթով մեղադրյալ Է.Գրիգորյանը առերևույթ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու համար անհրաժեշտ և բավարար արժեքով այլ անշարժ կամ շարժական գույք որպես ֆիզիկական անձ չունի<sup>7</sup>:

- Առաջին ատյանի դատարանը «Գույքի արգելադրման մասին» Նախաքննության մարմնի որոշման իրավաչափությունը հաստատել է՝ պատճառաբանելով, որ գույքի արգելադրման նպատակներից ենթադրյալ հանցագործությամբ պատճառված հնարավոր վնասի հատուցումն ապահովելը, ինչպես նաև հիմքը՝ գույքն օտարելն առկա են, իսկ հնարավոր դատական ծախսերի վերաբերյալ տեղեկություններ Դատարանին չեն ներկայացվել, ուստի նշված նպատակը տվյալ դեպքում բացակայում է:

Անդրադառնալով պաշտպանի մատնանշած այն հարցին, որ գործով առկա են երկու մեղադրյալներ, սակայն քննիչը արգելանք է դրել միայն իր պաշտպանյալին պատկանող գույքի վրա, ինչպես նաև ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ այդ հարցերը հնարավոր է ողջամիտ են, սակայն դրանց մինչդատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում լիարժեք ու հաստատական պատասխաններ տալ հնարավոր չէ և այն կարող է պատշաճ ու լիարժեք գնահատման ենթարկվել վարույթի հետագա փուլերում:<sup>8</sup>

- Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է ներկայացված նյութերից բխող հիմնավոր եզրահանգման, դրանք ամբողջությամբ ընդունելի է համարել և Առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողել անփոփոխ<sup>9</sup>:

14. Սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

<sup>7</sup> Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

<sup>8</sup> Տե՛ս սույն որոշման 9-րդ կետը:

<sup>9</sup> Տե՛ս սույն որոշման 10-րդ կետը:

Առաջին ատյանի դատարանը «Գույքի արգելադրման մասին» Նախաքննության մարմնի որոշման իրավաչափությունը հաստատելով, իսկ Վերաքննիչ դատարանն Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելով, պատշաճ գնահատման չեն ենթարկել այն հանգամանքը, որ արգելադրված գույքը՝ Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12 հասցեում գտնվող 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը, սեփականության իրավունքով պատկանում է ոչ թե քրեական վարույթով մեղադրյալ Է.Գրիգորյանին, այլ «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությանը: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ որպես առերևույթ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման նպատակով գույքային պատասխանատվություն կրող սուբյեկտ Նախաքննության մարմինը նույնացրել է քրեական վարույթով մեղադրյալ Է.Գրիգորյանին և նրա կողմից ղեկավարված «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությանը, և միաժամանակ վարույթի նյութերից բխող փաստական տվյալների բավարար համակցությամբ չի հիմնավորել, որ հիշյալ ընկերությունը հանդիսանում է մեղադրյալի գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող սուբյեկտ: Մինչդեռ, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի՝ նախաքննության մարմնի կողմից նշված հիմքով կարող է արգելադրվել միայն մեղադրյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի գույքը: Միաժամանակ հարկ է նշել, որ ընդհանուր բաժնային սեփականության դեպքում կարող է արգելադրվել միայն համապատասխան բաժինը, մինչդեռ սույն դեպքում բացակայում են նման հիմնավորումների համար հիմք ծառայող՝ գործի նյութերից բխող փաստական տվյալները:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Է.Գրիգորյանի՝ «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերության տնօրենը հանդիսանալու և որպես ֆիզիկական անձ վերջինիս անվամբ գույքերի բացակայության հանգամանքով պայմանավորված՝ նշված ընկերության հաշվեկշռում գտնվող գույքի արգելադրումը չի կարող համարվել արդարացված:

15. Անփոփելով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Նախաքննության մարմնի՝ «Երևանի ոսկերչական գործարան-1» «Գնումն» ԲԲ ընկերությանը պատկանող Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի 12 հասցեի 01-006-0307-0067 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը 1.092.593.543 ՀՀ դրամի չափով արգելադրելու մասին որոշումն իրավաչափ չէ, այն կայացվել է քրեադատավարական օրենքի խախտումներով, հետևաբար նշված արգելանքի կիրառմամբ հնարավոր չէ ապահովել հասարակության ընդհանուր շահի

պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև արդարացի հավասարակշռություն:

Ինչ վերաբերում է Առաջին ատյանի դատարանի այն փաստարկին, որ վերոնշյալ հարցին մինչդեռ ատական վարույթի դատական երաշխիքների շրջանակներում լիարժեք ու հաստատական պատասխան տալ հնարավոր չէ և այն կարող է պատշաճ ու լիարժեք գնահատման ենթարկվել վարույթի հետագա փուլերում, Վճռաբեկ դատարանը հիմք ընդունելով անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի հիմնարար նշանակությունը, գտնում է, որ այն ընդունելի համարվել չի կարող:

Վերոգրյալի արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է «Գույքի արգելադրման մասին» Նախաքննության մարմնի 2023 թվականի հունվարի 25-ի որոշման իրավաչափությունը հաստատելու մասին ստորագրած դատարանների հետևությունները հիմնավոր չեն:

16. Անփոփոխվելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը դատական ակտ կայացնելիս, իսկ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի դատական ակտն անփոփոխ թողնելիս, թույլ են տվել դատական սխալ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131-132-րդ հոդվածների պահանջները մեկնաբանել են սխալ, որը հանգեցրել է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածով նախատեսված՝ սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքի խախտման, ինչն ազդել է վարույթի ելքի վրա, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է ստորագրած դատարանների դատական ակտերը ամբողջությամբ բեկանելու և փոխարինող դատական ակտ կայացնելու, այն է՝ «Գույքի արգելադրման մասին» 2023 թվականի հունվարի 25-ի որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ Ռ.Թունիյանի միջնորդությունը մերժելու և հիշյալ որոշումը վերացնելու համար:

17. Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից բարձրացված մյուս փաստարկներին, ապա սույն դեպքում, երբ արդեն իսկ առկա է բողոքարկվող դատական ակտը բեկանելու իրավական հիմքը՝ Վճռաբեկ դատարանը նպատակահարմար չի գտնում անդրադառնալ դրանց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ, 171-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 31-րդ, 33, 34-րդ,

264, 281, 352, 359, 361-363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ՀԿԴ/0009/15/23 գործով ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2023 թվականի փետրվարի 10-ի որոշումը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2023 թվականի մարտի 9-ի որոշումը ամբողջությամբ բեկանել:

2. ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ Ռ.Թունիյանի միջնորդությունը՝ 2023 թվականի հունվարի 25-ի «Գույքի արգելադրման մասին» որոշման իրավաչափությունը հաստատելու վերաբերյալ, մերժել:

3. ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ Ռ.Թունիյանի՝ 2023 թվականի հունվարի 25-ի՝ «Գույքի արգելադրման մասին» որոշումը վերացնել:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝

\_\_\_\_\_ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Դատավորներ՝

\_\_\_\_\_ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

\_\_\_\_\_ Ա.ԶԻԶՈՅԱՆ

\_\_\_\_\_ Դ.ՎԵՔԻԼՅԱՆ